ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1700-Ա « 05 » մայիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի Հ.338-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի հ.338-Ա որոշման համաձայն՝ 101,200,000.0 (հարյուր մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 1 հատ Zhongtong bus LCK6126EVG մակնիշի տրոլեյբուսն անհատույց օտարվել (նվիրվել) է «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի ապրիլի 22-ի հ.338-Ա որոշումը.

1. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել թվով 1 հատ Zhongtong bus LCK6126EVG մակնիշի տրոլեյբուսի նվիրատվության պայմանագիր:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ